Արձանագրություն N 4
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ

ք. Երևան

19.02.2020թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գևորգյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Թ. Բերբերյան /գնահատող/, Տ. Պետրոսյան /գնահատող/, Ք. Մարտիրոսյան /բացող/, Ա. Երմազյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

(Գ. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն գների նվազեցման շուրջ անցկացվող միաժամանակյա բանակցություններին ծանուցված մասնակիցներից ներկայացել է միայն «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն:

1.2 Բանակցությունների համար սահմանվել է տասնհինգ րոպե ժամանակ: «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամանակում ներկայացվել է նոր գնային առաջարկ /Հավելվածը կցվում է/:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Մեծ Ծիածան» ՍՊԸ	Բավարար
Շուշան Տեխնիկս ՍՊԸ	Բավարար
Ա/Ձ Արարատ Ղուկասյան	Բավարար
Սմարթլայն ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման մասին

(Գ. Գևորգյան))

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Գևորգյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար **գրենական պիտույքների** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

4.3 Անգործության ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Գևորգյան

Անդամներ՝ ---------- Թ. Բերբերյան

---------- Տ. Պետրոսյան

---------- Ք. Մարտիրոսյան

---------- Ա. Երմազյան

Քարտուղար՝ ---------- Ս. Եղիազարյան